

Ձեր առաջին շաբաթների ուղեցույցը՝ բջջային հավելվածը, հետևյալ հղումով. ankommenapp.de:



#RumorsAboutGermany

Ապաստանը Գերմանիայում

2018թ. Գերմանիայում «հանձնվել» է ևս 1,510 ԳԳ քաղաքացի:

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Գերմանիայում ապաստան հայցող ԳԳ քաղաքացիների ընդհանուր թիվը կազմել է 7,570: Այսինքն, նրանք ավելի քան մեկ տարի «ճամբարներում» սպասում են իրենց հայցերի վերաբերյալ որոշումների ընդունմանը:

2018թ. ընթացքում Գերմանիայի ապաստանի համար պատասխանատու առաջին ատյանների կողմից ընդունվել է 2,535 ԳԳ քաղաքացի ապաստան հայցողի վերաբերյալ որոշում, որից մերժվել է 2,365-ը, ևս 2,875 ԳԳ քաղաքացու մասին ընդունվել է վերջնական որոշում, որոնցից մերժվել է 2,655-ը: Կարելի է ասել, 100 «հանձնվողից» 93-ին չի հաջողվել ստանալ բաղձալի «թուղթը»:

Դեռ ավելի ն...

2019թ. հունիսի 7-ին Գերմանիայի Բունդեսբազը ընդունել է միգրացիոն օրենսդրության մեջ փոփոխություններ կատարելու մասին նախագիծ, որով նախատեսվում են մի շարք խստացումներ: Ի թիվս այլ փոփոխությունների՝ այսուհետ ապաստանի հայցի վերջնական մերժում ստացած և Գերմանիայի տարածքում հայտնաբերված անօրինական գտնվող օտարերկրացիները, մինչև իրենց փաստացի վերադարձը, պետք է գտնվեն հատուկ պահպանման տարածքներում: Բացի այդ, այն դեպքերում, երբ անօրինական միգրանտները չեն համագործակցում իշխանությունների հետ և չեն բացահայտում իրենց ինքնությունը, միգրացիոն իշխանությունները իրավունք են ստանում նրանց տեղավորել նաև սովորական բանտերում՝ միայն թե քրեական հանցագործներից առանձին: Գերմանիայի իշխանությունները սկսել են նաև կիրառել լրացուցիչ միջոցներ ապաստան հայցողի ինքնությունը պարզելու ուղղությամբ:

Ուշադրություն

Մի բանում կարող եք վստահ լինել. մարդիկ, ովքեր խոստանում են ձեզ պայծառ ապագա և առաջարկում են «օգնություն» Գերմանիայում հաստատվելու հարցում, մտահոգ են միմիայն իրենց զրպանը լցնելու համար: Նրանք սովորաբար փորձում են ձեզ շփոթության մեջ գցել չեն ներկայացնում փախստականի կարգավիճակ ստանալու հետ կապված ԳԳ օրենսդրության բոլոր առանձնահատկություններն ու խնդիրները: Մի վստահեք նման «օգնականներին»:


Ապաստան հայցողների ճնշող մեծամասնությունը չի ստանում որևէ կարգավիճակ, և, ապարդյուն կրելով ուղևորության ծախսերն ու ռիսկերը, ստիպված վերադառնում է հայրենիք:

2018թ. Գերմանիան յուրաքանչյուր 15 «հանձնված» ԳԳ քաղաքացուց 14-ին մերժել է կարգավիճակ տրամադրել: Ինչու՞ եք համոզված, որ դուք հենց այն տասնհինգերորդն եք:

Օգտակար հղումներ

- Հայաստանի Հանրապետության միգրացիոն ծառայության կայքում կարող եք հետևել անօրինական միգրացիայի դեմ պայքարի Նորություններին հետևյալ հղումով՝ bit.ly/2ZvUaZX:
- ՀՀ Չբաղվածության պետական գործակալության կողմից աշխատանք փնտրողներին մատուցվող ծառայությունների, ինչպես նաև զբաղվածության պետական ամենամյա ակտիվ ծրագրերին կարող եք ծանոթանալ այցելելով գործակալության պաշտոնական կայք՝ employment.am:
- Եթե Գերմանիայում եք և որոշել եք կամավոր վերադառնալ, կարող եք դիմել Գերմանիայում գործող Միգրացիայի միջազգային կազմակերպության գործընկեր կառույցներին և ստանալ օժանդակություն «Կամավոր վերադարձի աջակցման և վերաինտեգրման» ծրագրի շրջանակներում: Մանրամասներին և դիմելու ընթացակարգին կարող եք ծանոթանալ հետևյալ կայքում՝ bit.ly/30LwSRc:
- Գերմանիայում աշխատելու վերաբերյալ առավել մանրամասն հայալեզու տեղեկություններ է պարունակում «Աշխատել Գերմանիայում և վերադառնալ Հայաստան» խորագրով գրքուկը, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ bit.ly/2MKfUzk:
- Ֆրանսիայի ներգաղթի և ինտեգրման գրասենյակի (OFII) և Գերմանիայի միգրացիայի և փախստականների հարցերով ֆեդերալ գրասենյակի (BAMF) համագործակցությամբ իրականացվող «Համագործակցություն վերաինտեգրմանն աջակցելու նպատակով OFII-BAMF» ծրագրի մասին տեղեկություններ ստանալու և տրամադրվող աջակցությունից օգտվելու համար կարող եք այցելել հետևյալ կայքը՝ www.returningfromgermany.de կամ հարողագրություն ուղարկել հետևյալ էլեկտրոնային հասցեով՝ CAROB.Armenia@bamf.bund.de:

տասը շափեր՝
հետո մեկներ



«Հայաստանի Հանրապետությունից Գերմանիայի Դաշնային Հանրապետություն անկախ միգրացիայի կանխարգելում» պոտենցիալ միգրանտների տեղեկացվածության բարձրացման միջոցով» ծրագիր

“Preventing Irregular Migration from Armenia to the Federal Republic of Germany by Raising Awareness of Potential Migrants” Project

Սիրելի հայրենակից,

Ինչպես ամենուր, այնպես էլ Հայաստանում, մարդիկ լավագույն կյանքի փնտրողներ են: Մշտապես փնտրում ենք հեշտ վաստակելու և կյանքի ավելի լավ պայմաններ ձեռք բերելու լուծումներ: Երբեմն նման լուծումները գտնում ենք Հայաստանից դուրս: Ավաղ, արտերկրում անհոգ ու արժանապատիվ կյանք վայելելու մեր ակնկալիքները շատ հաճախ անհիմն են: Դրանք հիմնականում կառուցված են այստեղից-այնտեղից լսած և առասպել դարձած պատմությունների վրա: Այդ պատմությունները հաճախ իրականության հետ որևէ առնչություն չունեն:

Բարեկեցիկ ու հեշտ ապրուստի երազանքին հետամուտ՝ մեր հայրենակիցները երբեմն վաճառում են տարիների քրտնաջան աշխատանքով ձեռք բերածը, խզում ընկերական ու գործնական կապերը, կատարում են մեծ ծախսեր ու մեկնում Եվրոպա, օրինակ՝ Գերմանիա: Իսկ արտերկրում, հատկապես՝ Գերմանիայում, հաստատվելու և հաջողություն գտնելու տարածված առասպելներից մեկը «հանձնվելն» է:

Ի՞նչ է սա նշանակում: Եվ ի՞նչ է իրականում թաքնված հոգածություն ստանձնելու պատրանք ձևավորող «հանձնվել» բառի տակ:

«Հանձնվելը» օտար երկրում ապաստան հայցելն է: Ապաստան հայցելը միջազգային իրավունքի հիմնական և հնագույն տարրերից մեկն է: Այն մի պետության կողմից մյուսի բաղաձայն պաշտպանության տրամադրումն է:

Գերմանիայում «հանձնվածին» սպասում են ոչ թե բարձր կենսամակարդակից օգտվելու հնարավորություններն ու զարգացած տնտեսության բարիքները, այլ ապաստանի հայցի քննության բարդ ու հյուժող ընթացակարգը: «Հանձնվելու»՝ ապաստան հայցելու ճակատագրական բայը կատարելուց առաջ խորհուրդ ենք տալիս մեկ անգամ ևս խորհել այստեղ ներկայացված փաստերի շուրջ: Ծանր ու թեթև արեք՝ արժի արդյոք մտնել խիստ կասկածելի հեռանկար ունեցող գործընթացի մեջ: Գործընթաց, որն անվերադարձ ծախսերու է ձեր ժամանակը, խաթարելու է երեխաների ուսման գործընթացը, ցրելու է «ծրի բուժվելու» պատրանքը, հուսախաբ ու «փողաթափ» է անելու,

դժվարությամբ կուտակած խնայողություններն ու ունեցվածքը «նվիրելու» է փաստաբաններին:

Յուրաքանչյուր ոք ապաստան հայցելու իրավունք ունի, բայց ամեն մեկին չէ, որ տրվում է ապաստան՝ պաշտպանություն:

Պաշտպանություն Գերմանիայում

Իսկ ի՞վ կարող է ապաստան կամ պաշտպանություն ստանալու իրավունք ձեռք բերել Գերմանիայում: Ո՞ւմ կարգավիճակն է համարվում անօրինական Գերմանիայում և ի՞վ է պարտավոր լքել երկիրը:

Գոյություն ունի պաշտպանության չորս ձև, որոնց հիման վրա ապաստան հայցողները իրավունք են ստանում բնակվել Գերմանիայում.

1. *Վախստականին տրամադրվող պաշտպանություն,*
2. *ապաստանի իրավունք,*
3. *օժանդակ պաշտպանություն,*
4. *հարկադիր վերադարձի ազգային արգելք:*

«Հանձնվածներից» շատերը, ովքեր օրինական կամ անօրինական ճանապարհներով հայտնվում են Գերմանիայում աշխատանք գտնելու և լավ կյանքի ակնկալիքով, անակնկալի են գալիս՝ հասկանալով, որ վերը թվարկված և ոչ մի հիմքով իրենք չեն կարող ստանալ որևէ կացության կարգավիճակ և կանգնում են հարկադիր արտաքսման և ապագայում Գերմանիա ուղևորվելու արգելքի առջև:

1. *Փախստականին տրամադրվող պաշտպանություն*

Փախստական ասելով՝ հաճախ նկատի ենք ունենում ինչ-ինչ պատճառներով տնից տեղահանված յուրաքանչյուր անձի: Միևնույն ժամանակ հարյուր միլիոնավոր մարդկանցից, որոնք ապրում են իրենց հայրենի երկրի սահմաններից դուրս, իրականում փախստականի կարգավիճակ ունեցողները շատ փոքր տոկոս են կազմում: Միավորված ազգերի կազմակերպությունը փախստական է համարում իրենց հայրենի երկրի սահմաններից դուրս գտնվող անձանց, ովքեր տանը կարող են ներթափվել, կամ ներթափվում են հետապնդումների կամ բռնության ռասայի, կրոնի, ազգային, որոշակի սոցիալական խմբի

պատկանելության կամ բաղաձայնական հայացքների պատճառով:

Գուցե լսել եք, որ հնարավոր է ապաստան հայցելու դիմում ներկայացնել «տնտեսական փախստական»-ի կարգավիճակ ստանալու համար: Միջազգային և գերմանական օրենսդրությամբ՝ մարդիկ, որոնք լքում են իրենց հայրենիքը՝ բարելավելու իրենց տնտեսական իրավիճակը, փախստական չեն համարվում:

2. *Ապաստանի իրավունք*

Ապաստանը գերմանական օրենսդրությամբ նախատեսված պաշտպանության մեկ այլ ձև է, որը մասնավորապես վերաբերում է այն մարդկանց, ովքեր հետապնդվել են բաղաձայնական հիմքերով: Ապաստանի իրավունք ստանալու համար հայցողը պետք է ապացույցներ ներկայացնի, որ իր ծագման երկրում պետությունը հետապնդում է իրականացնում իր նկատմամբ: Գործնականում պաշտպանության այս ձևը շատ հազվադեպ է շնորհվում:

3. *Օժանդակ պաշտպանություն*

Ապաստան հայցողին, ով չի ստացել փախստականի պաշտպանություն կամ ապաստան, կարող է շնորհվել օժանդակ պաշտպանության կարգավիճակ: Այս կարգավիճակը տրվում է միայն այն եզակի դեպքերում, երբ անձին լուրջ վնաս կարող է հասցվել իր ծագման երկրում, ինչպիսիք են մահապատժի, խոշտանգումների և անմարդկային պատժի սպառնալիքները, կամ եթե միջազգային կամ ներքին զինված հակամարտությունների պատճառով անձի վերադարձը իր ծագման երկիր հնարավոր չէ:

4. *Հարկադիր վերադարձի ազգային արգելք*

Պաշտպանության վերջին ձևը ևս կիրառվում է շատ հազվադեպ և հատուկ հանգամանքներում: Գերմանիայի իշխանությունները երբեմն արգելում են հարկադիր վերադարձը, ինչը նշանակում է, որ չնայած, պաշտպանության երեք այլ ձևերից և ոչ մեկը կիրառելի չէ, անձը չի կարող իր կամքից անկախ հարկադրաբար տուն վերադարձվել: Սա այն դեպքն է, երբ իշխանությունները համոզված են, որ ծագման երկիր վերադառնալը կարող է խախտել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիան, կամ անձի կյանքի կամ ազատության

համար առկա են հիմնավորված կոնկրետ սպառնալիքներ:

Ուշադրություն

Միայն վերը նշված հիմքերից որևէ մեկով կացության կարգավիճակ ստացած ապաստան հայցողները կարող են բնակվել Գերմանիայում: Մյուս բոլոր ապաստան հայցողները համարվում են անօրինական միգրանտներ և ենթակա են կամավոր վերադարձի կամ արտաքսման:

Լրացուցիչ փաստերի և տեղեկությունների համար կարող եք այցելել rumoursaboutgermany.info կայքը:

Անվճար բուժօգնություն. իրականություն, թե առասպել

Գերմանիայում ապաստան հայցողը կարող է ստանալ անհրաժեշտ բուժօգնություն՝ հիմնականում կյանքին անմիջական վտանգ սպառնացող անհապաղ և անհետաձգելի միջամտություն պահանջող, այդ թվում, հոիության և ծննդաբերության դեպքերում: Սակայն, «անհրաժեշտ բուժօգնության» շրջանակն ու ծավալը հստակ սահմանված չեն և որոշվում են հայցողաբար:

Եթե ցանկանում եք օրինական բնակություն հաստատել Գերմանիայում...

Ոչ ԵՄ անդամ երկրների բաղաձայնների դեպքում Գերմանիայում օրինական երկարաժամկետ կամ մշտական բնակություն հաստատելու համար անհրաժեշտ է ստանալ բնակության թույլտվություն:

Գերմանիայում բնակության թույլտվության տեսակների, այն ստանալու հետ կապված գործընթացների, մշտական բնակության իրավունք ունեցողների նատուրալիզացիայի, օտարերկրացիների ինտեգրման, նախնական կողմնորոշման ծրագրերի, կրթության, աշխատանքի, առողջապահության և սոցիալական աջակցության համակարգերի մասին և այլ տեղեկություններ ստանալու և խորհրդատվության համար կարող եք այցելել www.bamf.de կայքը:

Կարող եք նաև ներբեռնել «Գերմանիայում